Ավարտական հետազոտական աշխատանք

Թեմա՝ Արժեքային համակարգի ձևավորումը «Մայրենի», «Գրականություն» և «Հայ գրականություն» առարկաների դասավանդման ընթացքում

Կատարող՝ Սաղոյան Սուսաննա

Դպրոց՝ 110 հիմնական դպրոց

Առարկա՝ Հայոց լեզու և գրականություն

Կազմակերպություն՝ «Կրթություն առանց սահմանների» Հ/Կ

Խմբի պատասխանատու՝ Անահիտ Զոհրաբյան

Երևան 2023

Բովանդակություն

1. Ներածություն

Մաս 2. Ինչ է արժեքը

Մաս 3. Արժեքային համակարգի ձևավորումը ըստ Մ. Գալշոյանի << Մամփրե արքան>> պատմվածքի ուսուցման

Մաս 4. Արժեքային համակարգի ձևավորումը ըստ Ե. Չարենցի << Ես իմ անուշ Հայաստանի>> բանաստեղծության ուսուցման

Մաս 5.Արժեքային համակարգի ձևավորումը ըստ Ս. Կապուտիկյանի <<Խոսք իմ որդուն>> բանաստեղծության ուսուցման

6. Եզրակացություն

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Արդի աշխարհում հանրակրթության ընդհանուր որակի անկման աճող միտումը համընդհանուր երևույթ է և այս կամ այն չափով դրսևորվում է աշխարհի բոլոր երկրներում: Մանկավարժները փորձում են մշակել կրթության նպատակների ու բովանդակության ձևավորման նոր՝ գիտականության պահանջներին բավարարող ռազմավարություններ, գտնել ուսումնադաստիարակչական աշխատանքների կազմակերպման առավել արդյունավետ մեխանիզմներ, մեթոդներ և հնարներ: Բացի դրանից տեխնոլոգիական աննախադեպ զարգացումը լուրջ խնդիրներ է առաջադրում մարդկությանը: Մի կողմից տեխնոլոգիաների զարգացումը նպաստավոր պայմաններ է ստեղծում կրթության զարգացման համար, բայց մյուս կողմից, առանց կրթության բարեփոխումների նոր տեխնոլոգիաները չեն կարող նպատակային օգտագործվել: Նման իրավիճակում ուսուցչի արդյունավետ աշխատանքից շատ բան է կախված: Մանկավարժի մասնագիտությունը, ինչպես և բժիշկինը, հնագույններից է: Նրանում կուտակված են սերունդների հազարամյա փորձը, ըստ էության մանկավարժը սերունդներին կապող օղակն է, հասարակական-պատմական փորձի կրողը: Ժողովրդի հասարակական-մշակութային ամբողջականությունը մեծապես պայմանավորված է Դպրոց-Ուսուցիչ դերով: Վերջապես ի՞նչն է դարձնում մարդուն ուսուցիչ: Երևի ավելի շատ որևէ բան փոխելու ցանկությունը, որևէ կերպ աշխարհի չարիքը հաղթահարելու համար: Բոլորս գիտենք՝ մեր պետությունը բավականին ծանր դրության մեջ է, պատերազմ, կորուստներ, հետպատերազմյան տնտեսական և սոցիալական դժվարություններ: ԵՎ այս դժվարին իրավիճակում բոլորը շեշտում են կրթության, մատաղ սերնդի դաստիարակության և ուսուցչի դերի կարևորությունը: Պարզ է, թե ինչքան դժվար է ուսուցչի համար հասկանալ իր դերը , թե ինչպես կարող է ինքը այնպես անել,որ չկրկնվի այն ամենը, ինչ մենք ունեենք այսօր: Մենք բոլորս հասկանում ենք ,որ այն ամենը, ինչ տեղի է ունենում, շատ դեպքերում հենց վատ կրթության և ոչ ճիշտ դաստիարակության պատճառով է, սակայն հարց է առաջանում,

թե ինչպես դա պետք է անի ուսուցիչը: Ինչպե՞ս պետք է հասնի ավելի լավ կրթության և ավելի լավ արդյունքի:

Այս թեմայի ընտրությունը պատահական չէ, այն երկար մտորումների, վերլուծությունների, եզրահանգումների արդյունք է: Եվ ամենակարևորը ՝ ուսուցչի, հատկապես մայրենիի և գրականության ուսուցչի դերի գիտակցումը ինձ ստիպեց ընտրել հենց այս թեման՝ Արժեքային համակարգի ձևավորումը << Մայրենի>>, <<Գրականություն>>, <<Հայ գրականություն>> առարկաների դասավանդման ընթացքում: Դպրոցի դերն է կրթել լուսավորյալ, ակտիվ, իր հայրենիքը սիրող, իր երկրի պատմությունն ու ավանդույթները հարգող քաղաքացի:

Գաղտնիք չէ, որ ներկա տնտեսական քաղաքական բարդագույն պայմաններում դպրոցի համար այդ նպատակին հասնելը այնքան էլ հեշտ չէ: Հատկապես երբ առկա են զանգվածային տեղեկատվական միջոցների բացասական ազդեցությունը՝ հեռուստատեսությունն իր ճչան գովազդներով, հարուստ կյանքի, ճոխության, բռնության ու անբարո կյանքի պրոպագանդայով: Ակնհայտ է, որ կրթությունն այն ոլորտն է, որն այս պարագայում էական դեր պետք է ունենա, քանզի գործ ունի սերունդների դաստիարակության հետ: Կախված այն բանից, թե ինչ արժեքների կրող կլինի աճող սերունդը, կորոշվի նրա ապրելու և բարգավաճելու հեռանկարը: Եթե մենք չկարողանանք սերունդների մեջ սերմանել անձնազոհ հայրենասիրություն, լեզվապաշտություն և հավատ իր պայծառ ապագայի հանդեպ, դատապարտված ենք : Դպրոցն այն օջախն է, որի հիմնական առաքելությունը այդ արժեքները ներարկելն է, իսկ այդ աշխատանքի ամբողջ ծանրությունը ընկնում է դպրոցի և ուսուցչի ուսերին: Ավելի է դժվարանում ուսուցչի դերը, երբ նա համոզված չէ, որ կարելի է լիովին վստահել այն ընտանիքներին, որտեղից դպրոց է գալիս աշակերտը: Գնալով պակասում է առողջ ընտանիքների թիվը, և այդ իմաստով չի կարելի հարցը ամբողջովին թողնել ընտանիքներին: Դժվարացնում է ուսուցչի գործը նաև այն իրողությունը, որ մենք փոքր ազգ ենք, փոքր թվաքանականով: Մենք պարտադրված ենք լինել ավելի կոշտ, նպատակաուղղված ու նաև խիստ նպատակասլաց: Մենք

չպիտի հանդուրժենք նույնիսկ մեկ հայ երեխայի ճիշտ ուղուց շեղվելը։ Ուստի ամեն մի դաս, որն ուսումնական գործընթացի միավորն է, սովորողների հոգևոր հաղորդակցությունն է, որի բովանդակությունը գիտելիքներն են, իսկ արդյունքը յուրաքանչյուր աշակերտի արժեհամակարգի ձևավորումը։

Մաս առաջին

Ինչ է արժեքը

Բոլորս կարևորում ենք արժեքների ձևավորումը գալիք սերնդի մոտ և միգուցե այդ բառին ինչ-որ ենթագիտակցական իմաստ ենք հաղորդում: Փորձեմ սահմանել, թե ինչ է արժեքը: Ես համաձայն եմ այն ձևակերպման հետ, որ արժեքը երևույթ է մեր կյանքում, որի դիմաց մենք գին ենք վճարել: Այդ վճարը կարող է տարբեր լինել՝ հույզեր, այլ արժեքների զոհաբերություն, հարազատների կամ նախնիների կորուստ, կորցրած հող, հայրենիք, հավատ, լեզու և այլն: Արժեքը չեն ստանում հեշտությամբ, այն պետք է վերապրել, անցկացնել քո միջով, զգալ, գիտակցել: Ահա այդ ամենի դիմաց մենք ստանում ենք իմաստներ, քանի որ իմաստներն են իմաստավորում կյանքը: Առանց արժեքների կյանքը դատարկ է: Հեշտ կյանքը երբեք չի երջանկացնում այն պատճառով, որ չի բերում արժեքների ձևավորման: Որոնք են այն արժեքները, որոնք բյուրեղացել են հայ մարդու հոգում և պարտավոր ենք գնահատել, հարգել և պատասխանատվությամբ հետևել բոլորս : Երբ մենք խոսում ենք արժեքների մասին, մենք խոսում ենք մեզ համար կարևոր բաների մասին: Կան արժեքներ, որոնք բացարձակ են, մնայուն; Դրանք են հայրենիքը , լեզուն, հավատը, բարին, գեղեցիկը, սերը: Նմանատիպ արժեքների կրող լինելը պարտադիր են, դրանց կարևորումը չպետք է թողնել անհատի ընտրությանը: Քանի որ այդ արժեքները շատ կարևոր են հասարակության անվտանգության և առաջընթացի համար: Շատ կարևոր է, որ մարդիկ լինեն մնայուն արժեքների կրող , քանի որ դրանց հիման վրա ենք մենք կայացնում մեր որոշումները: Հայրենիք, լեզու, հավատ. ահա այս երեք սյուների վրա պետք է կառուցվի սերունդների կրթության և դաստիարակության մեր համակարգը: Աշակերտների հայրենասիրական զգացմունքների ձևավորման վրա մեծ ազդեցություն է ունենում գրականության ամեն մի դաս, սակայն որպես մայրենիի ուսուցիչ՝ ես հատկապես վերջին

տարիներին բախվում եմ մի շատ մտահոգիչ խնդրի։ Աշակերտները անչափ շատ են հեռացել գրքից, ընթերցանությունից, որը աշակերտի մտավոր զարգացման և բարոյական դաստիարակության ամենակարևոր միջոցներից մեկն է ։ Այն անհրաժեշտ է ոչ միայն սովորելու, նաև մտածելու, ըմբռնելու, հարուստ բառապաշարով արտահայտվելու համար։ Էլ չեմ խոսում առողջ բանավեճեր կազմակերպելու, վերլուծություններ և եզրահանգումներ անելու մասին։ Կրկին դժվարանում է ուսուցչի գործը, բայց, միևնույն է, ուսուցիչը իր նվիրյալ ու հետևողական գործունեությամբ հղկում ու մշակում է աշակերտի և՛ կարդալու տեխնիկան, և՛ հարստացնում է բառապաշարը, և՛ զարգացնում է լեզվական կարողությունները՝ միշտ ակնկալելով հին ու բարի ժամանակների ընթերցասիրության վերադարձը, գրքի ու դպրոցի արժևորումը, գրագետ ընթերցողի ձևավորումը։ Միայն հիմնարար գիտելիքներով զինված կարող ենք գնահատել ոչ միայն բարձր արժեքները՝ հայրենիք , կրոն, լեզու, այլև բարոյական արժեքները, ազնվությունը, բարությունը, ընտանիքի գաղափարը, ծնողասիրությունը, բնության նկատմամբ հոգատար վերաբերմունքը։ Հենց այս պատճառով է, որ կրթության հենքը և գլխավոր իմաստը պետք է դառնա նաև արժեհամակարգի ձևավորումը։ Անհատի կրթությունն ու դաստիարակությունը շատ վաղ տարիներից է սկսվում, և կրթական քաղաքականություն իրականացնող հիմնական օղակը եղել և մնում է դպրոցը։ Այն անմիջականորեն իր վրա է կրում հասարակական կյանքում տեղի ունեցող ակտիվ փոփոխությունները, որոնք ենթադրում են կրթական բնագավառի համապատասխան փոփոխություններ։ Այսօր հանրակրթական դպրոցներում նմանօրինակ գործառույթը վերապահվում է կրթական առանցքային նորմատիվ փաստաթղթին՝ <<Հանրակրթության պետական չափորոշչին>>։ Պարտադիր պայման է դասի պլանավորման հիմնական ուղենիշը համարել Չափորոշիչը, և դասի կառուցվածքում կարևորել չափորշչային պահանջների կատարումը, որի մեջ է մտնում աշակերտների արժեքային համակարգի ձևավորումը։ Դպրոցը պետք է լինի օրինակելի տարածք , ուր հաստատուն է վարքի նորմերը, ուր աշակերտները

սովորում են դրան համապատասխան։ Հաճախ դպրոցը ստիպված է պայքարել հանրության մեջ տարածված արատների դեմ և այդ պայքարում պարտավոր է հաղթել։ Բոլորս էլ գիտենք, որ կյանքը, ինչպես ամենուր, չի կարող հեշտ լինել նաև դպրոցում երեխայի համար։ Նա պետք է զգա ոչ միայն ուրախություն, այլև հոգս, ունենա թե՛ դժվարություն, թե՛ հաղթանակներ։ Դպրոցում աշակերտը պետք է ընկալի համակեցության նորմերի իմաստը և ընդունի դրանք։ Այդ ամենի պտուղները կլինեն իրական արժեքները, այլ ոչ թե թելադրված, անգիր արած, բայց աշակերտի համար ոչինչ չնշանակող ճշմարտությունները։ Եթե մեր դպրոցները կարողանան ձևավորել արժեքներ աճող սերնդի համար, կունենանք լավ և իմաստալից կրթական համակարգ։

Մաս երկրորդ

Արժեքային համակարգի ձևավորումը ըստ Մ. Գալշոյանի <<Մամփրե արքան>> պատմվածքի ուսուցման

Փոքր ազգերի լեզուն ինքնապաշտպանական միջոց է …

Հիմնական դպրոցի 7-րդ դասարանում Մ. Գալշոյանի <<Մամփրե արքա>> պատմվածքը լավագույն հնրավորություն է տալիս ուսուցչին աշակերտի մեջ արթնացնել հետաքրքրությունը գրողի և ստեղծագործության նկատմամբ, զարգացնելու սերը ընթերցելու նկատմամբ, այնպիսի սիրով ու հուզականությամբ ներկայացնել, որ աշակերտները մղվեն նաև շարքի մյուս պատմվածքների ընթերցմանը, արժեքային համակարգի ձևավորմանը։

Դասի նպատակներն են գրողի կենսագրության և մարդկային նկարագրի բացահայտումը,սեփական ժողովրդի նկատմամբ գիտակցված,ազգային արժանապատվությամբ զուգորդված վերաբերմունքը, հայրենասիրությամբ և ազգի հարատևության գաղափարի ընկալումը, ազգային արժեքների հանդեպ հպարտության և հիացումի սերմանումը։ Դասն սկսում եմ ընդհանուր հարցերով։ Աշակերտների մեծ մասը կարդացած է լինում նախապես հանձնարարված ամբողջական պատմվածքը, գրողի կենսագրության մասին լրացուցիչ տեղեկություններ հավաքած։ Պատասխանների ընթացքում պետք է աշակերտներին վստահեցնել, որ գրողներն էլ մարդիկ են՝ օժտված անհատականություններով, բայց միշտ ժամանակաշրջանի խոր ըմբռնումով և հեռատեսությամբ։ Դասը նպատակին ծառայեցնելու համար հարցերը պիտի բազմաբնույթ լինեն, որպեսզի բոլորը մասնակից դառնան դասին։

Ընդհանրապես հեղինակը ներկայացնում է հայության բեկորների վերածննդի ոգևորիչ պատկեր, որոնք ապրում են նոր տարածքի վրա, որը ծննդավայր չէ, բայց

իրենցն է։ <<Մամփրե արքան>> պատմվածքը <<Մարութա սարի ամպերը>> գրքի պատմվածքներից մեկն է։ Ինչպես մյուս պատմվածքներում, այնպես էլ այստեղ, հեղինակը փորձել է մոռացումից փրկել հայրենիքի հիշատակները, պատմության ճշմարտությունը և պահ տալ սերունդներին։ Լույս և հայ։ Լույս և զինվոր։ Լույս և հավատ։ Այսպես են ներկայանում հայոց գրերը պատմվածքի հերոսին։ <<Մաշտոցի գիրը եփած հաց է, թևի տակ դրած>>, ասում է Մամփրեն։ Իսկ նրա կարծիքով Մաշտոցի տառերը զինվորներ են։ Արդարության, ճշմարտության համար կռվող զինվորներ։ Գեղեցիկ, մաքուր ու արի զինվորներ։ Երկրի սահմանապահ զինվորներ։ Գեղեցիկն ու բարին պահպանող զինվորներ։ Հայոց երկրի թշնամիների դեմ կռվող զինվորներ։ Այս միտքը Պ. Սևակի մոտ այսպես է հնչում .<< Զորքից հետո միշտ էլ լեզուն են մարտադաշտ հանում։ Եվ ինչ չի կարող ոչ մի զորք անել, լեզուն է անում >>։

Այս օրինակները աշակերտներին բերում է այն համոզման, որ լեզվով է կայուն ազգն ու ժողովուրդը, լեզվի գոյությունը հայրենիքի ու պետականության գոյությունն է։ Արժեքային այս հստակ հոգեկերտվածքով սնված հայ աշակերտը իրենց համար որպես հոգևոր հաց պիտի ունենան մայրենի լեզուն ու պաշտամունքը նրա նկատմամբ։ Այդ հպարտությունն է քաջալերում Մամփրե արքային՝ մտովի դիմելու արյունարբու սուլթանին.<< Դու սուլթան ես, բայց քո սեփական տառերը չունես և քո արյունոտ հրամանները գրում ես այլոց տառերով։ Իսկ մենք թագավոր չունենք, բայց ունենք սեփական գիր։ Եվ իմացած եղիր, որ սուրբ Մաշտոցի գիրն էլ մեր թագավորն է>>։

Մամփրեի կարծիքով Մաշտոցի գրերը, ինչպես վարժապետ Հարությունն էր ասում, կարմիր են. <<Հայոց տառերը կարմիր են, քանզի սուրբՄաշտոցը իր սրտից է հանել ի լույս։ Եվ կարմիր են, քանզի սրբազան կռիվների են մասնակից եղել>>։

Սա մեծ խորհուրդ ունի հայ մարդու համար, քանի որ հայ ժողովուրդը այդ գրերի շնորհիվ է հարատևել, դարեր ի վեր կռվել օտարների դեմ՝ խուսափելով ձուլումից։ Այսօր էլ այդ կռիվը շարունակվում է , և հայի ոգին անկոտրում պահողը նաև Մամփրե արքան է։

Մամփրեն կերպար է, որ իր մեջ խտացնում է բոլոր այն տեղահանվածներին, որոնք միշտ հայրենիքի հիշատակների հետ են , նրանք նախնիների գերեզմաններին այցելում են միայն երազով: Նրանք ընդհանուր շատ բան ունեն, և Մամփրեն իրավամբ ժողովրդական խառնվածք է: Նա անհաշտ է, անարդարությանը՝ դեմ: Արդեն տառաճանաչ Մամփրեն այլևս թույլ չի տա որ անարդարություններ լինեն: Այն, ինչ չէր հասցրել այնտեղ հայրենիքում անել թալանչի Օսմանի լակոտի՝ Օսմանի հետ, հիմա էր ուզում անել: Դարանակալ թշնամուն, որ մինչև հիմա էլ դարանակալ են ու միայն թիկունքից են խփում, Մամփրեն մեծ ասելիք ունի: Նա չի կարող հաշտվել այն մտքի հետ, որ հայոց դյուցազուն Մհերի անունը կրող աղբյուրը Մեհրեաղբյուրից դառնա Աթաբունար:

<< Աթաբունար հարամ աղբյուր չկա: Չկա ու չկա: Մեհրե էր, Մեհրե էլ կմնա: Պատմություն կա, արարիչ կա և արարիչն ինքն է կնքել՝ Մեհրե աղբյուր: Արարիչն է ծնել ու արարիչն է կնքել…>>,- վերցնում է մատիտն ու կարմիր գլխատառերով գրում աշխարհին ուղղված իր վերջին խոսքը Մամփրեն, որով էլ ավարտվում է պատմվածքը: Սա միայն Մամփրեի հավատը չէր, սա նաև հայ ժողովրդի հավատն էր արդարության ու ճշմարտության հաղթանակի հանդեպ: Ցավոք, մինչև այսօր էլ որքան մոտենում ենք այդ հաղթանակին, այնքան մեզնից հեռանում է այն:

Մ. Գալշոյանը դարձավ Ակսել Բակունցի, Խաչիկ Դաշտենցի , Հրաչյա Քոչարի գրական գործի շարունակողը: Հայ ժողովուրդը դարձավ այդ մեծերի վաստակի գնահատողը: Իսկ ազգային արժեքները, որոնցից էլ ծնվում են համամարդկայինները, և մշակույթը պիտի գնահատվեն և փոխանցվեն սերնդեսերունդ, որպեսզի ապրի հայը, սիրի իր երկիրը և պայքարի հայրենիքի համար:

Այս թեման ու սումնասիրելո ւ ժամանակ ես շատ եմ կարևորում դասը դարձնել դաս- միջոցառում, որպեսզի աշակերտները կերպարներին անձնապես զգան, նրանց ապրումները վերապրեն, անցկացնեն իրենց միջով, գիտակցորեն ընկալեն ամեն

մի խոսք ու պատկեր։Այդ դաս-միջոցառումներից մեկը այնքան հաջողված էր, որ հոմանիտար առարկաների մասնախմբի կողմից գնահատվեց և որոշվեց, որ ներկայացումը տեղ գտնի լեզվին նվիրված համադպրոցական միջոցառման մեջ, որին կմասնակցեն դպրոցի բոլոր աշակերտները։ ՈՒ պատահական չէ , որ դրանից հետո հանդիսատեսներից շատերը Մամփրեի կերպարը մարմնավորող աշակերտին դիմում էին <<Մամփրե>> անունով։

Հատկապես վերջին տարիների դեպքերից հետո աշակերտներն ավելի իրատեսորեն և շոշափելի են ընկալում անվտանգ հայրենիք ունենալու գաղափարը և գիտակցում են, որ մենք զբաղեցնում ենք աշխարհագրական այնպիսի տարածք , ուր կան թշնամի պետություններ։

Կարծում եմ ,որ հենց դպրոցում պետք է գաղափար տալ թշնամու կերպարի մասին, որ աշակերտը գիտակցի, որ հենց ինքն է իր հայրենիքի պաշտպանը, որը պիտի դառնա իր սուրբ պարտականությունը։

Արժեքային համակարգի ձևավորումը ըստ Ե. Չարենցի <<Ես իմ անուշ Հայաստանի>> բանաստեղծության ուսուցման

Գրականության դասերը հայրենասիրության, հայրենապաշտպան դաստիարակության լավագույն հնարավորություն են ընձեռում։ Հայրենիքն ամենա բարձր արժեքն է, սրբություն, որին պետք է նվիրվել ամբողջովին։ Հայոց գրականության և պոեզիայի ողջ հարստությունը պետք է ծառայեցնել հայրենատեր ու հայրենապաշտ սերունդ դաստիարակելու համար։ Այդ հնարավորությունը ես օգտագործում եմ բորոր դասերին ու, երբ ուսումնասիրում ենք Եղ. Չարենցի <<Ես իմ անուշ Հայաստանի>> բանաստեղծությունը, դասը վերածվում է տոնի։ Դասը

սկսում եմ մեծ դերասան Խ. Աբրահամյանի ասմունքով։ Հենց առաջին պահից բարձրանում է աշակերտների հայրենասիրական ոգին և քանի որ բանաստեղծությունը նախապես հանձնարարված է անգիր, աշակերտներից շատերը միանում են դերասանին։ Հետագա բոլոր առաջադրանքների կատարման ընթացքում պահպանվում է պաշտամունքի հասնող սերը հայրենի երկրի նկատմամբ։ Աշակերտներից ոմանք, օգտագործելով իրենց տեխնիկական իմացությունները, ներկայացնում են իրենց պատրաստած սահիկաշարերը։ Աշակերտը հենց դասի ժամանակ տեսնում է և՛ հայրենի երկիրը՝ իր ողջ գեղեցկությամբ, և՛ հազարամյա անցյալի ու պատմական ծանր բախտի հետևանքները։ Մի հսկայական նյութ ու գաղափար մի բանաստեղծության մեջ։ ԵՎ այս ամենը՝ գեղեցիկ հայերենով։ Որպես բանալի օգտագործում եմ Հովհ. Թումանյանի խոսքը՝ ամեն մի բառը մի աշխարհ է։ Երբ հանձնարարում եմ բառային աշխատանք, աշակերտները դուրս են գրում հեզաճկուն պար, հազարամյա քար, վիշապաձայն բուք, աղոթք դարձած երկաթագիր գրքեր, արևահամ բառ, անհաս փառքի ճամփա, լացակումած լար, ողբանվագ երգեր խորիմաստ բառակապակցությունները և բացատրում, թե դրանք ինչ են բովանդակում։ Այս բանաստեղծի և բանաստեղծության ուսուցումը ձևավորում է աշակերտների մեջ պաշտամունք թե՛ մայրենի լեզվի, թե՛ հայրենիքի նկատմամբ։ Հանձնարարություններիցս մեկն էլ լինում է այն, որ աշակերտներից յուրաքանչյուրը յուրովի ներկայացնի իր հայրենիքը՝ բանաստեղծությամբ, արձակ խոսքով, իսկ շնորհալիները՝ նաև երգով կամ նկարով։ Երգերը լինում են հայրենասիրական, իսկ նկարները հիմնականում պատկերում են երկնքի անհունը մխրճված, բանաստեղծի համար ամենասուրբը հանդիսացող Արարատ լեռը։ Ձևավորվում է նաև ազգային երազանք՝ ուժեղ պետականություն, հարգանք ազգային սրբությունների նկատմամբ։ Դասապրոցեսի ընթացքում ես չափազանց կարևորում եմ աշակերտների սեփական կարծիքները անկաշկանդ արտահայտելը, ստեղծագործական մտքի զարգացումը։ Գրականության դասերը ավելի

արդյունավետ են դառնում, երբ առաջ եմ քաշում պրոբլեմային հարցեր՝ ստեղծելով բանավեճերի ու քննարկումների առողջ մթնոլորտ։ Այդ առումով շատ հետաքրքիր է դառնում դասը, երբ աշակերտների ուշադրությունը հրավիրում եմ <<անհայուրնկալ պատերը>> պատկերի վրա։ Ծավալվում է առողջ բանավեճ, քննարկում, իսկ վերջում ճիշտ ուղղորդումով համոզիչ եզրակացության են գալիս։ Այսպիսի մոտեցումներով աշակերտների մեջ ձևավորում եմ ամենաբարդ իրավիճակներում անգամ ճիշտ կողմնորոշվելու հմտություններ։ Վստահ եմ, որ երբ մարդու մոտ ձևավորվում են մնայուն արժեքներ, կարողանում է դրսևորել ճիշտ դիրքորոշում։ Օրինակ՝ հայրենաճանաչ ու հայրենասեր մարդը ոչ մի դեպքում չի արտագաղթի հանուն լավ կյանքի։ Ազնիվ ու արդար մարդը երբեք չի դրժի իր խոստումը։ Մայրենի լեզուն սրբություն համարողը օտարամոլ չի լինի։ Դասի վերջում հնչում է բանաստեղծի արվեստին համապատասխան կոմպոզիտոր Ա. Սաթյանի ստեղծած երաժշտությունը։ Այս երգն էլ Չարենցի բանաստեղծության նման անմահ է, որովհետև այն բխում է ժողովրդի սրտից և գրված է ժողովրդի համար։ Եվ՛ ասմուքելը, և՛ երգելը ներշնչում են հպարտության զգացումով և ապրելու, հարատևելու տենչանքով։

Արժեքային համակարգի ձևավորումը ըստ Ս. Կապուտիկյանի <<Խոսք իմ որդուն>> բանաստեղծության ուսուցման

Ավելի լավ է հայ մարդը համր լինի, քան օտարախոս։

Գ. Նժդեհ

Մեր մշակույթի հիմք ու առանցքը հայոց ոսկեղենիկ լեզուն է։ Այն մեր ինքնության պահպանման գլխավոր երաշխավորն է։ Կորցնել լեզուն, նշանակում է կորցնել իր պատկանելիությունը հայ տեսակին։ Այս իմաստով Ս. Կապուտիկյանի <<Խոսք իմ որդուն>> բանաստեղծության ուսուցման հիմնական նպատակը մայրենի լեզվի նկատմամբ սեր ու հպարտություն դաստիարակելն է, մեր ժողովրդի ճակատագրի մեջ այդ լեզվի անփոխարինելի դերը ճանաչել տալն է։ Վերջնական նպատակը՝ սիրել ու փայփայել, պահել ու գուրգուրել մայրենին՝ բոլոր սրբություններից

ամենասուրբը։ Հայրենասեր բանաստեղծը իր հարազատ լեզվի հետ մտքով անցել է դարերի խորքը, վկան եղել ազգակործան փոթորիկներին և աղետների միջով ու ոգեշնչված պատգամում է բոլոր հայ թոթովախոս մանուկներին.

Թե մորդ անգամ մտքիցդ հանես,

Քո մայր լեզուն չմոռանաս..

Երբ անցնում եմ այս բանաստեղծությունը, հեղինակի նման պարզ ու բնական զրույց եմ տանում աշակերտների հետ, որոնք արդեն անգիր գիտեն բանաստեղծությունը։ Պարզում եմ, թե արդյոք իրենց ընտանիքներում էլ կա պատշաճ վերաբերմունք մայրենիի նկատմամբ, արդյոք հարազատներ ունեն դրսում, որոնք արդեն չեն խոսում մայրենի լեզվով։ Փորձում եմ մտերմիկ զրույցի միջոցով վստահեցնել, որ հայրենասեր բանաստեղծուհու խոսքը ուղղված է ոչ միայն սեփական որդուն, այլև բոլոր հայ զավակներին, ուր էլ լինեն նրանք, որքան էլ դա դժվար լինի։ Ստեղծում եմ այնպիսի մթնոլորտ, որ աշակերտները համարձակորեն արտահայտեն իրենց մտքերը, բերեն կենդանի օրինակներ։ Համոզված եմ, որ բանաստեղծուհու պատգամը ծիլեր է տալիս հենց դասի ընթացքում, ձևավորվում է համոզմունք, որ հետագայում անպայման կվերածվի արժեքի և դիրքորոշման։ Երբ միասին հնչեցնում ենք բանաստեղծության վերջին տողերը, գալիս են այն համոզման, որ, իրոք, մայրը, հայրենիքը և լեզուն մեր սրբություններն են։

Եզրակացություն

Արժեհամակարգի ձևավորումը բոլոր առարկաների ուսուցիչների սրբագույն պարտքն է, բայց ազգային արժեհամակարգի ձևավորումը կարմիր թելի պես անցնում է հատկապես հայագիտական առարկաների միջով: Այդ է պատճառը, որ հատկապես վերջին վերապատրաստումից հետո հաճախ եմ մտածում համագործակցել գործընկերներիս հետ , անցկացնել ինտեգրված դասեր: Կարծում եմ, որ դա ավելի արդյունավետ կլինի աշակերտների՝ որպես ազգային բարձր արժեքների կրողների ձևավորման գործում:

Շարունակ փոփոխվող այս աշխարհում կրթությունն առաջինն է, որ ցնցումների է ենթարկվում, բայց և կրթությունն առաջինն է, որ պետք է համարժեք արձագանքի բոլոր փոփոխություններին: Հետևաբար բարոյական արժեքներ ձևավորելու համար անհրաժեշտ է նվիրյալ և միայն նվիրյալ ուսուցիչ: Թեև տարբեր տեխնոլոգիաների դերը խիստ բարձրացել է, բայց երբեք չի նվազել ուսուցչի դերը: Նա դասապրոցեսի կազմակերպիչն է, դասի բովանդակության կառուցողն ու մատուցողը: Լավ ուսուցչի կերպարը, նրա ջերմ խոսքն ու խրախուսական ժպիտն անգամ մեծ արժեք ունի, որին չի կարող փոխարինել ոչ մի տեխնիկա: ՈՒսուցչի անձը դառնում է սովորողի անձի ձևավորման հզոր գործոն: Այսինքն՝ ուսուցչի դիրքորաշումները, աշխարհայացքը, արժեհամակարգը, ճաշակը, վարքագիծը դառնում են օրինակ աշակերտի համար:

ՈՒնենալով երկարամյա աշխատանքային փորձ՝ եկել եմ այն համոզման, որ այն անհաջողությունները, որ ունեցանք վերջին տարիներին, արդյունք էր հենց վատ կրթության, ազգային արժեքների ստորադասման, չարժևորման: Դաս պիտի քաղենք և կրթության մեջ ամենակարևորը դարձնենք ազգային արժեհամակարգի ճիշտ ձևավորումը: Այսօր հրամայական է դարձել ազգային համախմբումը հենց ազգային արժեքների շուրջ: Պետք է կարևորել ու գնահատել այն ամենը, ինչ ունենք: Մեր

ազգայինը թանկ ժառանգություն է, որը պարտավոր ենք պահել անբասիր և միայն նրա հենքի վրա կառուցել նորը։

Ամփոփելով իմ այս համեստ աշխատանքը՝ լիահույս եմ, որ հանրակրթության խնդիրներով մտահոգ այրերը, մանկավարժները և, վերջապես, հասարակությունը կվերանայեն իրենց վերաբերմունքը դպրոցի նկատմամբ և լիարժեք կօգտագործեն նրա դաստիարակչական ու կրթական անսպառ հնարավորությունները։

Ավելացնեմ նաև, որ այս վերապատրաստման ընթացքում ինձ համար շատ ուսանելի էին բոլոր դասընթացները, և քանի որ ինձ միշտ էլ մտահոգել է իմ ընտրած թեման, շատ հաճելի էր լսել բոլորին, հատկապես Ս. Խաչատրյանի դիտարկումները։ Շատ շնորհակալ եմ թե՛ վերապատրաստող կազմակերպությանը, թե՛ վերապատրաստողներին։

Գրականության ցանկ

1.Հանրակրթության մասին պետական չափորոշիչ

2. Մ. Գալշոյան

3. Ե. Չարենց

4. Հ. Թումանյան

5. Ս. Կապուտիկյան